

Ծանաչենք մեզ

(Սեպագրայինը հայոց պատմությունում)

ԵՐՈՒԱՆԴԻ ԲԱԴՈՒՆՑ (ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ)

Ծանաչել նախնիների երկիրը՝ մեր պարտքն է: Ոչ միայն որովհետեւ, որ դա մեր նախնիների երկիրն է, այլ եւ նրա համար, որ դա մեր էութիւնն է, որովհետեւ եւ դա մեր ժառանգորդների, սերունդների հայրենիքն է, միակ, իսկական հարազատ հայրենիքն է:

Երկրորդ հարկումեակն է գնում, ինչ Հին Հայաստանի սահմաններում գտնուած հինգ հարկերից անցած սեպանման գրերով թողած արձանագրութիւններն ու նախնում խաղերի աշխարհ, այժմ Ուրարտու կոչուած թագաւորութեան պատմութիւնն են ուսումնասիրում: Փաստօրէն առանց իրական ժողովրդի: Սեպագրերը անուանել են ալարողերէն, խաղերէն, ուրարտերէն, բիսինիլիերէն նոյնիսկ նորիսուրիերէն, իսկ փաստօրէն լեզուն չեն գտել:

Այժմ ուրարտերէն կոչուող լեզուն լեզուաբան ու պատմագէտ Նիկողայոս Մառի կարծիքով, եղել է կովկասեան լեզուախմբին յարող պասսիւ կառուցուածքի լեզու: Սրա հիման վրայ է, որ կովկասագէտ լեզուա-

բանների ջանքերով, սեպագրերից հաւաքել են կովկասեան լեզուներում եղած բառակազմող ածանցների նման ածանցներ, որոնցով բառեր են կազմում սեպագրերի վանկերով, որոնք ոչ մի լեզուում գոյութիւն չեն ունեցել, որոնց 70 առ հարիւր իմաստ չեն ստացել, եթէ իմաստաւորուել են, այն էլ հարցականով, որ ճիշտ չեն:

Ըստ ասուրագէտ լեզուաբան Գ.Ա. Մելիքիչվիլու, «էրզաւտիվ (ըստ Մառի՝ պասսիւ — Ե. Բ.) կառուցուածքը կովկասեան լեզուների, մասնաւորապէս վրացերէնի գլխաւոր յատկութիւններից մէկն է: Սրանում է արտայայտուած քերականական կազմուածքով ուրարտերէն լեզուի մօտիկութիւնը նրան հարազատ խոռոիերէնի, (որի համար նոյնպէս յատկանշական է էրզաւտիվ կառուցուածքը), ինչպէս եւ այժմեան քարթվէնների ու այլ կովկասեան լեզուների հետ» («Ուրարտական սեպանման արձանագրութիւններ» (Մ. 1960, էջ 53): «Ածանցների» հիման վրայ իմանում են բոլոր

մը, իբրեւ գրական թեմա եւ ուրեմն իբրեւ շահի աղբիւր: Հոգեկան շահի, մնացեալն ալ՝ իր կարգին: Շիրինեանի գիրքով՝ ունինք գիտական ուսումնասիրութիւն մը, որ Յեղասպանութեան թեման կ'արժեւորէ, մասնակցելով անգիտակցաբար այդ ընդհանուր շարժումին ու կեցուածքին: Նորերուն մօտ, կ'ըսէր Օշական, «Աղէտը... թեմա է գրական ընդլայնումի»(19): Բայց ո՛չ բոլորին: Կան այսօր ինքնորոնման գրողներ (Հոսս՝ Նաճարեան, Առլէն, հայալեզու գրականութեան մէջ՝ Որբունի), որոնք թերեւս չէին նախատեսուած Օշականի կողմէ, եւ որոնց մօտ ընդհակառակը՝ կը կարդանք Աղէտին ազատագրումը թեմային շահագործման հոսանքներէն ու վտանգներէն: Մահացու մեղք մը կը թուի ինծի երկուքին միջեւ գոյացող տարբերութեան անտեսումը:

Այս բոլոր թիրիմացութիւններով ու տկարութիւններով հանդերձ՝ բացառիկ շահեկանութիւն մը կը ներկայացնէ իմ աչքիս Լ. Շիրինեանին հատորը: Շահեկանութեան առաջին պատճառը այն է, որ կը փորձէ ան տեսակետացնել «կազմակերպող սկզբունք»ի հարցը, որ հետեւաբար տուեալ մը չէ՝ հեղինակին համար: Ապացուցումի կարօտ է: Ապացուցումը կը յաջողի անշուշտ, բայց տեսանք, թէ ի՞նչ

գինով: Աղէտը թեմայի վերածելով: Տեսականացումի բոլոր փորձերը շահեկան են սակայն, որովհետեւ կարելի է քննարկման ենթարկել զանոնք, կարելի է երկխօսութեան մէջ մտնել անոնց հետ, կարելի է վիճարկումի անցնիլ ի հարկին, եւ այդ ձեւով ամէն պարագայի՝ յառաջանալ, սորվիլ ու սորվեցնել: Անոնք որոնք, ընդհակառակը, չեն մտնել տեսականացման փորձին մէջ՝ իրենք զիրենք վտանգի չեն ենթարկել: Սորվելու պատրաստ չեն, ու ոչ ի՞նչ կը սորվեցնեն: Լոռն Շիրինեանի գործը կէտ առ կէտ քննադատելով, անձամբ՝ շատ բան սորվեցայ: Կը յուսամ որ այս աշխատանքը կ'ընայ ուրիշներու ալ օգտակար ըլլալ: Շահեկանութեան երկրորդ պատճառը այն է, որ շատ կարեւոր կէտերու կը դպի Շիրինեան, գիտնալով թէ հոս՝ հարցադրութեան մը կառուցումը անհրաժեշտ է: Այս գիտակցութիւնը անգնահատելի է եւ իսկապէս բացառիկ:

Իսկ երրորդ պատճառը արտայայտուած է հեղինակին իսկ կողմէ իր վերջաբանին մէջ՝ «Այս ուսումնասիրութեամբ փորձեցի (հայոց) մշակութային արտադրութիւններէն մէկը՝ գրական գրուածքները գետնի վրէնք արտադրման վայրին մէջ, այսինքն՝ Սփիւռքի՝ մէջ»(20):

19.— Տե՛ս Յ. Օշական, Համապատկեր, հատոր է, էջ 357, էջատակի ծանօթութեան մէջ:

20.— Շիրինեան, էջ 273:

հոլովները, խոնարհումները, եզակի, յոգնակի դրու-
թիւնները, իսկ բուն իմաստը մնում է անյայտ:

Յայտնի մեծ հնագէտ ու պատմաբան Բ.Բ. Պիոտ-
րովսկին «Վանի թագաւորութիւն» գրքում (Մ. 1959)
գրում է՝ «Չնայած նրան, որ 80 տարի լեզուաբանները
ուսումնասիրում են սեպագրերը, չստ հարցեր մնում են
չլուծուած, դեռ մօտ անցեալում Ֆրիտրիխը (նշանաւոր
ասորագէտ-լեզուաբան, Ե.Բ.) դառնութեամբ նշել է, որ
տարածայնութիւնները հիմնական հարցերում են
մնում»: Նշում է, որ լեզուի կազմուածքը լաւ ուսում-
նասիրուած է, իսկ բառագիտութիւնը չի առաջադիմում
(էջ 29), բազմաթիւ սեպագիր տուեալներ մնում են
անյայտ:

«Լաւ ուսումնասիրուած լեզուի կառուցուածքի»
հիման վրայ մասնագէտը Արգիշտի թագաւորի տարեգ-
րութեան (ՈւՍԱ, 128, A2) տող 20-22 կարդում է՝ *ha-ú-bi*
URU Qi-hu-ni KUR... ku-je-a-di pa-a-ri-e URU A-Li-iš-tú-ú

Սրա թարգմանութիւնն է՝ «Նուաճեցի եւ Քիխունի
քաղաքի երկիրը... հասայ(?) եւ մինչեւ Ալիշտու քաղաքը»:

Ուրարտագէտ Ն. Յարութիւնեանը «Բիախնիլի»
գրքում, ըստ ուրարտագիտութեան այս օրինաչափու-
թիւնների, գրում է, որ Արմաւիրի մօտ գեռ Արգիշ-
տիխնիլի բերդը չկառուցած, ուրարտական զօրքը
անցաւ Արաքսի ձախ ափը»... դուրս եկաւ Երեւան-
Սեւան խճուղին... ոչ միայն հասաւ Ալիշտու քաղաքը,
այլ եւ Իշտիկունի քաղաքի երկրամասը Սեւանի հիւ-
սիս-արեւմտեան ափին»... (էջ 208 եւ 209): Արգիշտին
խճուղով հասաւ Ալիշտու եւ Սեւան:

Իսկ Արգիշտիի տարեգրութիւնից բերուածը հայեր
են բառակազմութեան ճիշտ տառադարձութիւն է լատի-
ներէն ու հայերէն՝

*ha-a-ú-bi uru Qi-hu-ni Kur... Ku-te a-di pa-a-rie uru A-
li-is-tú-ú*

«Նա(դադ)ուլի բերդ Քիխունի կուռ... կու տե ադի
փաարի Ե բերդը Ադիխստուռ»:

Ի՞նչ է ասուած՝

«(Երբ) Քիխունի բերդի կողմը կը խաղաղուի, (այն
ժամանակ այդ կողմը կ'օգտագործուի) կը տայ դա. փարել
(առնել, գրաւել) Ադիխստու (Աղստեւ) բերդը»: Իսկ
Աղստեւը Սեւանից 100 կմ կուռ գետի, լեզգիների Լիբի
երկրի կողմին էր: Իսկ պարոն Յարութիւնեանը այն
տեղադրում է Սեւանի ու Երեւանի արանքում Արովեանի,
Հրազդանի մօտերքում:

«Պատմա-բանասիրական հանդէս»ի 1969 թուի
թիւում մասնագէտ Ն. Յարութիւնեանին 25 էջ (երկու
նորմայից աւել) էին յատկացրել երկու տասնեակ հայ
մտաւորականների պախարակելու՝ նրա համար, որ
նրանք բացասական կարծիք էին յայտնել ուրարտա-
գիտութեան մասին: Իմանալով որ Պարտիայի ցուց-
մունքով բոլոր խմբագրութիւններին ասուած է հակա-
ուրարտագիտական յօդուածներ չտպել, պարոն մաս-
նագէտը այն աստիճան ազատ է զգացել, որ չի նկատել
իրեն անհեթեթութիւնը: Թուարկելով մի քանի բառեր ու
անուանումներ բացարձակ հնդեւրոպական նախալեզուից
եկող, որոնք հնդեւրոպական լեզուախմբին պատկանող
հայերէնը «փոխ է առել» կովկասի լեզուախմբին
պատկանող ուրարտերէնից («Եւ, իստինի-աստ, ադի՝
դիտու, սուրի, արծիբի, ծուէ» եւայլն) անուանելով
«Ուրարտու-հայկական ընդհանրութիւններ»:

Առական ասում է՝ «Երբ գողը տնից է, կովը երգիքից

կը տանեն»:

Հայագիտութեանը վնաս տուողները հայ մասնա-
գէտներն են եղել: Սա այդ յօդուածում իրեն անուանում
է՝ «Հայերէնից ոչ հեռու» անձնաւորութիւն: «Ուրար-
տու-հայկական ընդհանրութիւններ»ի հեղինակ Յարու-
թիւնեանը նոյնիսկ բացառում է ուրարտերէնի փոխա-
ռութիւնը հայերէնից որեւէ բառ:

Բ.Բ. Պիոտրովսկին, վերը յիշուած «Վանի թագա-
ւորութիւն» գրքում, նշելով գերմանացի արեւելագէտ
Ա.Դ. Մորդթմանի 1872 եւ 1877 թթ. փորձերը հայե-
րէնի հիմքով սեպագրերի վերծանումը, տողատակ
ծանօթագրութիւնում գրել է՝ «Մորդթմանը այնպէս
էր տարուել սեպագրերի «թարգմանութիւնով» հայե-
րէնի օգնութեամբ, որ ջանում էր Սարգուրի I արձա-
նագրութիւնը հասկանալ նոյն ուղիով, չնայած նրան, որ
Լեյարդը արդէն ճիշտ հասկացել էր նրա ասուերէն
լինելը» (էջ 11):

Նշելով սրանից ու սրա նման որակաւորումներից,
վերը յիշած Պ-Բ Հ յօդուածում մասնագէտը Մորդթմանի
ու Սանդաճեանի փորձերը որակաւորում է որպէս
գիտական խայտառակ տապալուում, տողատակ նշելով
նրանց աշխատութիւնները, որպէս իրեն կողմից ու-
սումնասիրուած եւ իրեն որակաւորումը հաստատած:
Իրականում նա երեւի թէ աշխատութիւնները հազիւ
տեսած լինի: Ուրիշ կերպ նա, օրինակ, Մորդթմանի
փորձերում պէտք է Աճառեանի նման նկատէր, թէ ինչպէս
նա ու Վանեանը, (ըստ Հր. Աճառեանի)՝ «... Մորդթման
ZDMO 26, 485 եւ 30, 438 Վանեան բեւեռագրերի մէջ
գտնում է Bag «Աստուած» եւ bagrituri՝ նոյն արմատից»
(ՀԱԲ, հ. I, էջ 274): Նրա նկատածը հոծ սեպագիր
բառերում «առ-նի ու չի-նի» դարձուածքում աղաւաղ-
ւած «արնի-չինի» բառն է՝ իբրեւ «առնական», «տղա-
մարդկային»ի դրսեւորումը, որ բոլորովին ոչինչ
առնչութիւն ունի առնել ու չինել հասկացողութեան հետ:
Իսկ Մորդթմանը Վանեանի հետ իմացաւ սեպագրերից
Բագ եւ Բագրեստուր թագաւորի ճիշտ անունը, որ մինչեւ
հիմա բոլոր ուսումնասիրողները, ոչ ճիշդ կարդալով,
աղաւաղուած Սարգուր ձեւով են արտայայտուել, իբրեւ
«ուրարտերէն Սարգիա աստծոյ» անունից առաջացած:

Լուսի-իբրու որդի Բագ-րի-տուրը, որ նշանակում
է Բագրեւանդի Ռա, Բէ, Բի աստծոյ տուածը, պէտք է որ
ծնուած լինէր Ռա աստծոյ Բագրեւանդ գաւառում, որտեղ
գտնուում էր Ասորեստանի Սալմանասար III թագաւորի
ախոյեան Ար-րա-մու թագաւորի մայրաքաղաք Ար-
զաղկուն: Սալմանասարը յետոյ գրաւեց Արզաղկուն,
կողոպտեց, աւերեց, այրեց, ոչնչացրեց: Բագրիտուրն
էր, որ նոր մայրաքաղաք-բերդը կառուցեց Վանայ ժայռի
վրայ Ն.Ք. 827 թուից առաջ (858 թ. յետոյ, մօտաւո-
րապէս 2840 տարի առաջ): Ար-րա-մու թագաւորը
զարձաւ հայերի Արամազդ աստուածը, աստուածների
հայրը: Բագրիտուրը, երեւի առաջին անյաղթ՝ Բագ
Պաղդին (Պաղդին) էր: Նա առաջինը եղաւ, որ Սալմա-
նասար III-ի մեծ բանակը Պաղնատուն գաւառում
ջախջախեց եւ կասեցրեց նրա մուտքը Հայաստան-Ու-
րարտու: Բագրիտուր Ա-ն էր, որ առաջին անգամ
ասորերէն գրերը օգտագործեց, իր անունից ասորերէնով
արձանագրութիւն թողեց, իսկ նրանից յետոյ, սկսած
Բագրիտուր Ա-ի հետեւորդ Էսպուլվունուց, բոլոր Վանի
թագաւորները իրենց հարազատ լեզուով թողել են

(Ճանաչե՛ք... շար. էջ 10)

ԾԱՆԱԶԵՆՔ...

Շաբ. էջ 6-էն

բազմաթիւ վիճաբեր:

Կարդանք մի քանի հին անուն:

ԷՐ-Ե-ԲՈՒ-ՆԻ ԹԷ՞ ԷՐ-Ե-ԻՈՒ-ՆԻ

Վանի Արգիշտի Ա թագաւորի տարեգրից ուրարտագէտները շատ վաղուց գիտէին, որ նա ինչ-որ տեղ կառուցել է Իրպուլնի անունով մի բերդ: 1950 թուին Արին բերդի նախնական պեղումների ժամանակ մի վիճաբեր բացուեց, որում սեպագրուած էր, որ Արգիշտին Իրպուլնի բերդը կառուցեց: Գտնուած վիճաբերը կառուցած Իրպուլնի բերդի տեղը հաստատեց: Ուրարտագէտ Մարգարիտ Իսրայէլեանը հաղորդագրութիւն հրապարակեց Գ.Ա. «Տեղեկագիր» հանդէսի 1951 թուի N 8-ում գտնուած վիճաբերի մասին, յայտնելով իր կարծիքը այն մասին, որ բերդի սեպագրի անունը կարող է լինել մայրաքաղաք Երեւանի անունն հիմքը:

Սեպագիրը ԲՍ=ԱՆՈՒ վանկն արտայայտող գիրը միաժամանակ արտայայտում է նաեւ ԲՍ=ՐՈՒ վանկը: Ելնելով այս փաստից, Իսրայէլեանը ճիշդ բերդի անունը տառադարձել է Իր-բու-ու-նի-նի = Ir-bu-ú-ni-ni: Բայց աւագ մասնագէտը յիշեցրել է գիտաշխատողին, որ ձայնեղ Բ=Ր բաղաձայնը կարող է արտայայտուել այն դէպքում, երբ բաղաձայնը լինի բառի սկզբում, ինչպէս Bi-a-i-ni = Բի-ա-ի-նի եւ այն ժամանակ, երբ նա գտնուում է երկու ձայնաւորների արանքում, ինչպէս՝ A-bi-Li-a-ni = Ա-բի-լի-ա-նի: Կարելի է երեւակայել երիտասարդ գիտաշխատողի տրամադրութիւնը այսպիսի «դասից» յետոյ:

Երկար չտեսեց դրութիւնը: 1952-ին Կարմիր բլուրի պեղումներին բացուեց մի վահան, որի վրայ բերդի անունը սեպագրուած էր (պատահական) աւագ մասնագէտի «պահանջածով, բաղաձայն Բ=Ր գալիս էր երկու ձայնաւորների արանքում՝ Ir-e-bu-ni = Էր-ե-ու-նի (ըստ իս):

Մի գիտաժողովում հարցադրման կարգով ասացի, որ «գրեթէ 10 տարի կը լինի, որ էրեբունին է գտնուել եւ պէտք է գրուի Էր-ե-ու-նի, իսկ մասնագէտները չարունակում են տառադարձել Իրպունի ձեւով: 1960-ին լոյս տեսաւ Փիրուզեանի խմբագրութեամբ «Հայկական ճաշեր», որում ճիշտ տառադարձուած էր Էրեւունի: Իսկ 1971 թուին լոյս տեսաւ Մարգարիտ Իսրայէլեանի, «Էրեբունի բերդ-քաղաքի պատմութիւն»ը. հայ մասնագէտներից սա միակն է, որ որոշ պատմական եւ գիտական բովանդակութեան տուեալներ տալիս է այս գրքում: Բայց ինչո՞ւ էր (b)բունի, այլ ոչ Էրեւունի:

Այս բերդի անունը սեպագրուած է տասներկու անգամ, որոնցից միայն մի վահանի վրայ է, որ սեպագրուած է Ir-e-bu-ni, մնացած տասներմէկ անգամ սեպագրուած է Ir-bu-u-ni ձեւով: Ծիշտ է, այժմեան Երեւանի անունի մօտ է եւ հարազատ է Էր-ե-վու-նի ձեւը: Իսկ ինչո՞ւ է 12-ից միայն մէկը մօտ այժմեան անունը: Ուրարտագէտը սրան չի պատասխանի, ինչպէս եւ տասնեակ ուրիշ հարցերի:

Էրեւունի թէ Իրեւունի անունը վանեցու բարբառով է: Իսկ այն մէկը տեղացի, այստեղի սեպագրիչն է սեպագրել իրեն լեզուով: Դժուար չէ կռահել թէ ինչպէս

է այս անունը առաջացել: Բերդը կառուցուել է որպէս թիկունքային յենարան զօրքի համար, Սեւան արշաւելու համար: Զինուորներն են բերդը կառուցել: Սեւանից վերադարձող զինուորները, դեռ շատ հեռուից նկատել են իրենց կառուցած բերդը: Իրար ցոյց տալով՝ երեւացող բերդը, աղաղակել են՝ «Իրեւունի, իրեւունի»: Իսկ Արարատեան դաշտում ծնուածը կ'ասէր՝ «Էրեւունի է...»: Այսպէս էլ լսել է զինուոր-ների աղաղակը Արգիշտին: Այն երեւացող բերդը անանուն էր: Նրա դրան ձախ ու աջ պատերին փակցրած վիճաբերը յայտնում էր՝

Բագ Խալ-դի-նի-նի ալ-սուի շի-նի ԻԱր-գի-իս-տի-սե... է-նի E.GAL (= ՏՈՒՆ ՄԵՄ) րա-դու-ցի Ե, շի-յ-դի էս տու-ու-նի: Բագ Խալ-դի-նի-նի ալ-սու-ի շի-նի ԻԱր-գի-յ-յ-տի-նի ԻՄ-նու-ւա-դի'-(նի) մամ տամու, մամ ալ-սու-ու-նի-նի...:

Մեր լեզուով կը լինի՝ «Խալդ աստծոյ ալսուի դրդմամբ Արգիշտս այն ՏՈՒՆԸ ՄԵՄ (չըջա)պատեց, կառուցել տուեց: Խալդ աստծոյ ալսուի դրդմամբ՝ Արգիշտին է Մենուայի դրածը, այր (մարդ, ման, արքայ) (մեծ) տան, ման (արքայ) ալսուինի...»: Այս ալսու բառը մնում է անհասկանալի: Արցախում, Սիւնիքում մինչեւ վերջերս էլ ընդունուած էր երդուել՝ «Տօրս արեւը վկայ...», «եղբօրս արեւով եմ երդուում...» գուցէ մի այդպիսի աստուածութիւն, որ պէտք է ունենար ամէն մի անձ:

Բայց ինչո՞ւ էրեւունի, այլ ոչ Էրեւունի:

Ոչ միայն նրա համար, որ ասուրերէնը վ(ւ) հնչիւն չունէր, հայերէն վ(ւ) = W իրենք, ասորեստանցիք նոյնպէս արտայայտուում էին իրենց Բ=Ր հնչիւնով եւ դա շատ ճիշտ էր: Յայտնի է, որ քայփփփվ(ւ) փոխանցման օրինակութիւնը կայ: Ասորեստանցիք հայերէն Սո-վիամ սեպագրել են Su-bi-(an) վանկերով: Զամ-գի-ուտը տուել են Sa-an-gi-bu-te (Սա-ամ-գի-բու-տ) ձեւով, եւայլն: Բայց յարգելի ուրարտագէտ Իսրայէլեանը չուզեց բուն մասնագէտներից անջատուել, յօրինեց ուրարտերէն «erebu» բայաձեւը, որպէս թէ «գրաւել», «նուաճել», «փախցնել» եւայլն, որոնցից էլ ուրարտերէն Erebuti-ն է առաջացել (նշուած գրքի 14-15 էջերը): Էլ ի՞նչ ուրարտագէտ, որ չ'աղաւաղի ճշտութիւնը: Մի ուրիշ մասնագէտ կ'ասի գրքի հեղինակը ուրարտագիտականը աղաւաղում է, անհիմն ԻՐ = իր վանկը փոխելով er = էր վանկի եւ 11 անգամ Ir-pu-ni գրանցուած er-(e)-bu-ni դարձնելով: Բայց որ օգնում է չեղեալ ուրարտերէն լեզուի հաստատմանը, ոչ մի նկատողութիւն չկայ: Թող աղաւաղի, միայն ճիշտը չգրի: Իսկ մեր պարտականութիւնն է ճշտութեանը հասնել:

Վանեցիք, Էլնելով այն փաստից, որ ասուրերէնը ունի a, e, i եւ u ձայնաւորներ, i ձայնաւորով իրենց է ձայնաւորն են արտայայտել բառասկզբին, ինչպէս՝ ini = էնի, istini = էստինի, irebuni = էրեւունի: Նոյն i-ի հնչիւնով արտայայտել է նաեւ j հնչիւնը, երբ նա լինում է ձայնաւոր a = ա եւ u = ու հնչիւնների մօտ, ինչպէս Bi-a-i-ni = վայնի, Zi-u-gu-ni = Զլուգունի, Gi-ar-ni = Գյաունի եւայլն:

Տրամաբանութիւնը թելադրում է, որ տասներմէկ անգամ Ir-bu-u-ni-ni աւելի զօրեղ է միայն մի անգամ սեպագրուած Ir-e-bu-ni անունից: Բայց այժմեան Երեւան անունը աւելի հարազատ է Էր-ե-ու-նի բառը, մանաւանդ որ վանեցու բարբառը այլեւս չկայ: Սա է պատճառը, որ պէտք է ընդունենք Էր-ե-ու-նի ձեւը,

որը գոյութիւն է ունեցել տեղի բնակչութեան լեզուում: Բայց անկախ մեր կամքից, չպէտք է մոռանանք, որ Արգիշտու եւ նրա հայրենակից զինուորների լեզուում «երեւել» բառը հնչում էր իրուոււմի, էրուոււմի ձեւով:

Մ. Իսրայէլեանը վերը յիշուած գրքում նշում է, որ «հայ մատենագրութեան մէջ Երեւանի մասին հնագոյն տեղեկութիւնները հանդիպում են միայն մ.թ. 7-րդ դարից սկսած» (էջ 6): Կարծում եմ կարելի է Մովսէս Խորենացին յիշեցնում է, որ 384 թուից յետոյ Արշակունի երկու թագաւորներ Արշակ Գ. եւ Խոսրով Բ. թագաւորը կռուել են Երեւելի դաշտում, Երեւանի բերդից հարաւ արեւմուտքի գետափնեայ մասը:

Մովսէս Խորենացու պատմածով, Երեւելի դաշտը չէր կարող լինել Վարանդի գաւառում:

ԵՐԵՒԵԱԼ ԴԱՇՏ = ԷՐ-Ե-ԻՈՒ-ՆԻ

Մեծ Հայքի երկրորդ բաժանումը կայացաւ փաստօրէն 384 թուին, երբ նրա 4-5-րդ մասը անցաւ Պարսկաստանին, Մծբին քաղաքով, Կարինը՝ Բիւզանդիոնին հասաւ: Պապի աւագ որդին՝ Արշակը հինգ տարի լինելով թագաւոր Մեծ Հայքի, բաժանումից յետոյ, շատ նախարարների հետ, արքունական գանձերով անցաւ Բիւզանդիայի մասը: Գանձերը Դարանաղից Մոփք տեղափոխելիս, երեք իշխան՝ Սուրէն Խոռոխունի, Վահան Առաւելեան, Աշխատար Դիմաքսեան գանձերը փախցնելով, տարան Պարսկաստանի մասի թագաւոր նշանակուած Խոսրով Արշակունուն:


Ըստ Լէոյի՝... Այս աւագակային գործը պատճառ է դառնում, որ Արշակը պատերազմ յայտարարի Խոսրովին: Պատերազմը տեղի է ունենում Վանանդ գաւառի Երեւել դաշտում: Արշակը չարաչար յաղթուում է...» — Լէօ, «Երկերի ժողովածու» Ա. հատոր (Ե. 1966, էջ 498):

Իսկ ո՞վ է ապացուցել, որ Վանանդի գաւառում Երեւելի դաշտ կար եւ պատերազմը Վանանդի այդ դաշտումն էր: Ճիշտ է, Մ. Խորենացու սկզբնաղբերները չունեն, բայց Խորենացու պատմութիւնից չի երեւում, որ պատերազմի Երեւել դաշտը եղել է Վանանդ գաւառում:

Ըստ Խորենացու, երբ Արշակի խնդրանք՝ գանձերը վերադարձնել, Խոսրովը մերժեց, «... Արշակը զօրք ժողովեց եւ շարժուեց Խոսրովի վրայ: Խոսրովն էլ իր բանակից, որ Գեղամայ ծովի մօտ էր եւ կոչուում էր Մորս, գնաց Արշակի դէմ, որպէսզի իր սահմանները չմտնէ, բայց այնքան շուտ չկարողացաւ հասնել, այնպէս որ Արշակն արդէն իջել էր նրա սահմանները, Վանանդ գաւառը: Նրանք իրար հանդիպեցին Երեւել կոչուած դաշտում եւ սաստիկ խիստ պատերազմ տուին: Արշակի զօրքը ջարդուեց, նրա սպարապետը, Դարա Սիւնին, պատերազմի մէջ մեռաւ եւ Արշակ քիչ մարդով փախուստի դիմեց» (Հայոց պատմութիւն, Ե. 1981, էջ 284):

Եթէ Արշակը Վանանդ էր մտել, ապա նա եկել էր Բասենի դաշտով: Եթէ նա գանձերն էր ուզում զօրքի ուժով առնել, Վանանդի կողմերում ոչ մի տեղ չկար, որ Խոսրովը գանձեր պահէր: Գանձերը կը լինէին Գառնիում կամ Վաղարշապատում, կամ Արտաշատում:

Երեւանից դէպի Կարին տանող երկու ճանապարհ



կար, ըստ վաճառական Զաքարէ Ագուլիսեցու (տես նրա «Օրագիրը»)՝ մէկը Արաքսի ափերով, ուր շատ անգամ պէտք է լինում գետի մի ափից միւսը ցատկել: Զօրքի համար դա անմատչելի էր: Երկրորդ ճանապարհը Վանանդ գաւառի միջով, Նախիջևան գիւղի մօտով, իջնում էր Ախուրեանի ափը, Վաղարշապատի միջով, անցնում էր Հրազդան գետը այնտեղ, ուր գետը կիրճից դուրս է գալի Կարմիր բլրի մօտ, որտեղ Վանի թագաւորութեան ժամանակից կար Տէր Սեւայնի աստծոյ (Տիր) մեհեանը, այժմեան Արին բերդի բլրի մօտով, դուրս էր գալիս այժմեան Նուբարաշէնի Ադ Եփեսոս ոլորանով, գնում էր դէպի Արտաշատ (նրանից էլ դէնը, դէպի Ջուղա ու Թաւրիզ): Արին-բերդից ուր էրբունի բերդն էր, ճանապարհը ճիւղաւորուում է դէպի հիւսիս, դէպի Գառնի, ինչպէս եւ դէպի Սեւան ու Աղստեւ բերդը (Կուռ գետի հովտում):

Հրազդան գետի կիրճից դուրս գալու տեղում Ն.Ք. Է. դարում Վանի Ռուսա Բ. թագաւորը կառուցել էր Տէր Սեւայնի տաճարն ու բերդը, ինչպէս եւ այժմեան էջմիածինի կոչուող Ջրանցքը: Այս բերդից դէպի Արաքս, Հրազդանը ճիւղաւորուում էր վտակների ու ճահճուտներ ու եղէգնուտներ էր առաջացնում (գոյութիւն ունէին մինչեւ 1945 թիւը): Տէր Սեւայնուց վերեւ կիրճը անցնելու տեղ չկար: Միակ գետանցքը այս բերդի մօտ էր: Այստեղով էր անցնում Վաղարշապատ-Արտաշատ ճանապարհը: Գոյութիւն ունէր նաեւ Էրեբունի. ճիւղ անունով՝ էրեբունի բերդը: Այս բերդից էր սկսուում Երեւելի դաշտը՝ այս բերդի անունով: Ըստ իս, այս է Երեւելի դաշտը, Երեւանը չըջապատող նախալեռնային ստորոտներից մինչեւ Հրազդանի ափերը: Արշակի զօրքը կարող էր անցնել Վանանդի գաւառը, Վաղարշապատ հասնել, իսկ Խոսրովի զօրքը, աճապարելով, Գեղամայ լճի մօտի բանակատեղից հագիւ հասնէր Էրեւունի-Երեւելի բերդի շրջակայքը: Չէ որ Բասենի գաւառից պէտք է յայտնէին Արշակի զօրքի մուտքը Արեւելեան Հայաստան:

Խոսրովը բանակով կարող էր անցնել Հրազդան գետը եւ Վաղարշապատից արեւմուտք կամ արեւելք, բաց դաշտում հանդիպէր Արշակի զօրքին: Հանդի-

պոմը կը լինէր ճակատ առ ճակատ անմիջական եւ յաջողութիւնը աւելի շուտ կը լինէր բազմամարդ բանակին, քանի որ երկու բանակն էլ յոգնած կը լինէին արշաւանքից:

Փաստօրէն պատերազմը տեղի է ունցել Երեւելի դաշտում: Դժուար է կռահել, որ խորքով, հասնելով էրեւոնի-Երեւեալ բերդին, զօրքին տուել է հանգըստանալ շրջակայքի բլուրների շուրջ: Փաստօրէն խորքով բանակը կտրել էր Արշակի բանակի ճանապարհը դէպի Գառնի կամ Արտաշատ, որտեղ կարող էին պահուած լինել զանձերը:

Սորենացին ասում է, որ Արշակը պարտուել է: Հետեւապէս խորքով պէտք է սպասէր, որ Արշակի զօրքի մի ոչ մեծ մասը անցնէր գետը, միւս մասի գետը անցնելիս, խորքով զօրքը պէտք է գրոհէր Արշակի զօրքի փոքր մասի վրայ եւ խուճապի մատնէր Արշակի զօրքին: Սա կարող էր լինել էրեւոնի ու Տէր Սեւայնի բերդերի արանքում Երեւելի դաշտում, Երեւոնի բերդի մօտ:

Կարծում եմ, Սորենացու Երեւելի անուանումը դաշտը եղել է այստեղ, էրեւոնի ու Տէր Սեւայնի բերդերի արանքում, Հրազդան գետի ձախ ափին յառող դաշտը:

ԲԱԳ ՏԷՐ ՍԵՒԱՅՆԻ

Էրեւոնու շրջակայքը յայտնի էր արդէն նրանով, որ բերդի բլրի ստորոտում խաչուում էին քարաւանների մայր ուղիները Կուր գետի հովտից եկող եւ այստեղ ճիւղաւորուող դէպի Արտաշատ-Ջուղա եւ դէպի Վաղարշապատ-Կարին տանող ճանապարհները: Որիս բանուկ պէտք է լինէին Վաղարշապատ-Երեւոնի-Գառնի, Երեւոնի-Սեւան, Էրեւոնի-Արտաշատ ուղիները: Վաղարշապատ գնացող-եկողները պէտք է Հրազդան գետը անցնէին այստեղ, որտեղ գետը դուրս է գալիս իր կիրճից ազատ դաշտ ու բազմաթիւ վտակներով ցրուում է, ճահճուտ առաջացնում:

1968 թուին էրեւոնու 2750-ամեակն էր տօնուում: Պեղումները ցոյց տուեցին, որ էրեւոնին անընդմէջ գոյատեւել է մինչեւ այն ժամանակը, երբ Կոնդի տակ, կիրճում կամուրջ է կառուցուել եւ բերդը իր անուան հետ միասին տեղափոխուել է կիրճի գլուխը, որպէս կամուրջի պահապան: Դա եղած էր լինէր մօտակայ միջին դարերում: Քրիստոնէութիւնը ընդունելիս, Վաղարշապատից Արտաշատ ճանապարհը Հրազդան գետն անցնում էր Կարմիր բլուրի մօտ, որտեղ Թեյշեբաինի կոչուող բերդն էր: Էրեւոնի բերդի կառուցելուց 100 տարի (մօտաւորապէս) յետոյ կառուցուել է Կարմիր բլուրի բերդը Ռուսա 2-րդ-ի կողմից: Կարմիր բլուրի պեղումները ցոյց տուեցին, որ բոլոր գոյքն ու թանկագին իրերը, որ կային էրեւոնի բերդում, Ռուսան տեղափոխել էր Կարմիր-բլուրի բերդը: Վանի թագաւորութեան հիմնադիր Բագրիտուր Ա-ից յետոյ, բոլոր թագաւորները պարտադիր կերպով կառուցումներ էին կատարում: Թէեւ 714 թուին (Ն.Ք.) Ռուսա Ա-ի օրօք ասորեստանցի Սարգոնի արշաւանքը ահռելի մեծ վնաս հասցրեց Վանի թագաւորութեանը, Ռուսայից յետոյ, Արգիշտի Բ-ն, ինչպէս եւ Ռուսա Բ-ն շինարարութիւնը երկրում շարունակում էին: Մեծ նշա-

նակութիւն տալով Հրազդանի գետանցքին Կարմիր բլրի մօտ, Ռուսա Բ-ն ձեռնամուխ է լինում գետանցքի մօտ մեծ բերդի եւ այս գետից դէպի Արգիշտիխինիլի (Արմաւիր) եւ Արգիշտու Արաքսից կառուցած ջրանցքների կողմը Ջանգու գետից ջրանցքի կառուցման: Երեւի թէ ազատ բանուորական ոյժ էր ձեռք բերել, որոնց համար այժմեան Ջուարթնոցի մօտ առանձին բնակավայր էր կառուցել Սողի («Օգուտի») անունով, (որ սեպագրուած է Ջուարթնոցի վիմագրում): Բնակավայրի մեծը (ՏԻ-ն) տուել է Պի-դի-նի ուղին, որից մօտ կէս կմ գետնի տակով (թունելով), նաեւ Քասախ գետի վրայով, ինչպէս եւ Հրազդանի կիրճի աջ ափի ժայռոտ կողով ջուր կարող էր տանել որոգման համար: Մեծ հնագէտներ էին ապրում Սող (թէ Ջուղ) քաղաքում: Հնագէտների պատուին է կոչուում Կարմիր բլուրի բերդը Տէր Սեւայնի = Tei Sebaini: Իսկ այսպիսի առնական անունը «սեւ մարդկանց տէր Աստուած» մեր մասնագէտները, աղաւաղելով, անուանում են Թեյշեբաինի: Գետը անուն չունէր: Պիդինի (Ջրանցքի) ակունքը սկիզբ էր առնում Եղ-դարունիանի (այժմեան Եղուարդի կողմի) գետից: Անուան գեղեցկութիւնը նրանումն էր, որ ժողովուրդի տիրակալ աստուածը (չաստուածը)՝ Տէր Սեւայնին բոլոր ջանասէր մարդկանց պարգեւում, շնորհում էր այն մասնագիտութիւնը, որը մարդն էր ուզում: Նա էր պարգեւում ջանասէր պատանուն գրել ու կարգաւ սովորել: Ռուսա Ա. թագաւորը սեպագրել է թէ ինչպէս նա կարողացաւ գրել-կարգաւ սովորել, նոյնիսկ քարը տաշել, յղկել, սեպագրել ու դնել: Այդ է պատմում ՈւՍԱ-ի 267 վիմագիրը՝ 1-ու Ե դի-իպ-րի, տի-նի

Թուում է թէ Ռուսան առաջիններից էր, որը զգաց դպրութեան գերբնական ուժը պահպանել գրերի միջոցով մարդու միտքը սերունդներին հաղորդելու համար: Փառաբանել է Տէր Սեւայնի աստծոյ կարողութիւնը՝ մարդկանցը նուիրել ցանկացած արուեստը, գիտելիքը: ՈւՍԱ-ի 267 վիմագրում նա մարդկանցը յայտնում է՝ «Բագ IM-ա-ԵՆ, գի-Ե, Է-Նի Նի-Լի պու-լու-սը Ռու-սա-ա-սե 1-ու Ե (մեկ-ու Ե) դպրել, դրել»:

Այստեղ IM գիրը ասուրերէնում ամպրոպի, կայծակի, որոտման Աղաղ աստուածն է, համառօտ գրութեամբ: Տառադարձուում է անունը Աղ-աղ վանկերով: Նոյն նշանակութիւնն ունի նաեւ մեզ մօտ: Բայց նա մեզ մօտ կոչուում է սեւերի տէր, ժողովուրդի տէր՝ Տէր Սեւայնի, Հայքի արեւմտեան զաւառներում յայտնի է Սեվետէրեա անունով: Սրա անունով շատ բերդեր, բնակավայրեր են եղել:

«Գիւ» նշանակում է «գիտցիր, իմացիր», որ այս Տէր Սեւայնի աստծոյ շնորհումով նա, Ռուսան մեկու Ե (մենակ է) դպրել քարին ու դրել քարը: Հեթանոսական Հայաստանից գրաբարը Տիր անունով է պահել դպրութեան ու մասնագիտութիւնների աստուածութեան անունը:

Տիրիգատ անունը ասում է, որ դա պարսկական անուն է: Հր. Աւառեանը ասում է, որ հայերը պարսիկներից են փոխառել դպիր բառը: «Դպիր... գրագէտ, ատենադպիր, պաշտօնական թղթերի կարգացող պաշտօնեան... Ս. Գր. եկեղեցական պաշտօնէութեան մէջ տիրացուից բարձր գտնուած աստիճան» (Ղ. ԱՐ, I, էջ 688): Հայերէնի հիմքը համարում է պահլաւերէն dipir

Արգիշտու Կարեգրությունից (ՈւՍԱ, 128 A 2 4րդ 15-17)

URU Դ - pu - ú - ni - ni ši - di - is tú - ú - bi e

KUR Bi - i - a - i - na - a - ú - i uš - ma - a - se - e

KUR Lu - lu - i - na - ú - i na - a - pa - a - hi - i - a - i - di

«Քարտուղար», որ բնիկ իրանական չէ, այլ սեմական փոխառություն է էլամերեն tuppi «արձանագրություն» եւ սուլերերեն dub «գրություն տախտակ» բառերից:

Հայերեն սեպագրերը օգտագործուել են Ն.Ք. Թ. դարից, իսկ dub բառը ձայնեղ բաղաձայններով փոխ է առնուած շումերերենից անմիջապէս. Հայերէնի օրինաչափութիւններով ստեղծուել են Հայերէն դուրտե (սեպագիր), դիւարի (Ռուսայի մօտ), դպրեյ, դպրութիւն, դպրանոց, դպիր, դպրոց եւայլն: Իսկ պարսիկները միայն Զ. դարի կէսերից (Ն.Ք.) սկսել են օգտագործել գրեր: Այսինքն, կարող է Հայաստանի պետութեան օրօք Հայերը ունէին գրեր (Ն.Ք. ԺԵ.-ԶԳ. դարերում): Գրականութիւնում յիշուում են բալուերէն, խուրիերէն, միտանիերէն սեպագրութիւններ: Եւ սրանցից ոչ մի վիճաբար չեմ տեսել: Հաստատ համոզուած նրանով, որ Բալու, Պաղիւն, Պաղնատուն անուանումները ծագել են այդ տեղերում եղած խեթական սեպագիր Պախոււա, Պախուրա, Պախուրիւն Հայերէն անուանումներից, որոնց հիմքում պախիւ = պախիւ գործողութեան բայաձեւերից կազմուած անուններ են, որոնք Ն.Ք. Է. դարի «Աշխարհացոյց» ձեռնարկի Պաղիւն, Բալու, Բալախուվիտ, Պաղնատուն, Բաղաբերդ եւ այլ անունների հիմքն են դառել: Եթէ իսկապէս, կայ բալայերէն սեպագրեր, ապա պէտք է լինեն Հայերէն լեզուի հին Հայաստ թագաւորութեան ժամանակի, որոնք, ինչ խօսք, մեծ հետաքրքրութիւն պէտք է առաջացնեն լեզուաբանների մօտ:

Բազ Ուալդից յետոյ երկրորդ մեծ աստուածն էր Վանի թագաւորութեան օրօք Բազ Տէր Սեւային: Սրա անուան բերդի փականի վրայ, որ գտել են Կարմիր բլրին 1946 թուին, սեպագրուած է եղել՝

iRu-sa-a-i iAr-gis-te-hi-ni-i-E. ú-ri-(is-bu-si-ni URU D) Te-i Se-ba-i-ni URU D

Ռու-սա-ա-ի Ար-գիշ-տե-ի-նի-նի ՏՈՒՆ ուրի (ամ-մեկմեկի Բազ) Տէր Սեւա-յ-նի ուրու»

Անուան երկարութիւնը սեպագրողներին ստիպել է օգտագործել գաղափարագրային DIM = ԻՄ, որով արտայայտուում է Ասորեստանի ապմրոպի, չանթի ու որոտի աստուածը՝ Ադադ:

ԾՃՏՈՒՄՆԵՐ

Վերը տեսանք, սեպագրուած է՝ Ռուսա մէկ-ու ե դի-պի-րի, տիւնի, մասնագէտը կարգում է՝ Ռուսան

Ունդիպրի երկրորդ անունով... նոյնպէս մէկ թուանշանով սեպագրուած է մէկ-ու դուրի կուտ Ետիւնի, իսկ մասնագէտը կարգում է «i ú-du-ri KUR e-ti-ú-ni, որպէս «Սեւանեան չրջանի երկրամասերի հաւաքական անուն» (ՈւՍԱ, էջ 444): Ստիպուած, նախօրօք ճշտումները պէտք է հասկանալի դարձնեն մեր փոփոխումները:

ՈւՍԱ-ի 74475 վիճագրերը, մասնագէտի բառակազմութեամբ, կրկնում ենք հայատառ

74 iՄb-նու-ա-շb միւալ-դի-նի-լի շb-իշ--տի-լի շի-դի-ի-իշ-տու-ա-լի


75 iՄb-նու-ա-շb միւալ-դի-նի-լի KÁ շի--դի-իշ-տու-ա-լի

Այս համադրումից մասնագէտը գտել է, որ 75-ի KÁ գաղափարագրի դիմաց 74-ի շիշտիլի բառն է, որ նշանակում է ուրարտերէն «դարպասներ», յոգնակի ձեւով, ինչպէս ուրարտերէնում է ընդունուած՝ վոտտա: Ասորագէտ Լ.Ա. Լիպինի «Աքքադերէն լեզու» գրքի (1957) սեպագրերի աղիւսակի 100-րդ գիրն է արտայայտում Ká = կա՝ վանկի տեսակը, ինչպէս եւ ասորերէն babu = դուռ = բաբու բառի գաղափարագիրն է: Բայց ՈւՍԱ-ի գաղափարագրերի աղիւսակի 41 էջում ասորերէնի միակ գրի դիմաց ուրարտերէնում երեք տարբերակներն են դրած: Բոլորն էլ մասնագէտը ընդունում է KÁ:

Բանը նրանում է, որ Վ. Մերեթելին 74 վիճագիրը համարել էր կեղծուած: Գ.Ա. Մելիքիշվիլին ասել է՝ վիճագրի «անբասիր տեկստը ձեւաբանական ու շարահիւսական օրինաչափութիւնների պահպանման տեսակէտից կեղծիքը բացառում է» (ՈւՍԱ, էջ 186):

Ընդամէնը չորս ուրարտական բառեր են: Այս շիդիշտու բառը անցողական բայ է, նշանակում է կառուցել: Սրա համար գործող անձը դրուած է հրգատիւ հոլովով, անուանը կցուած է շb = še ածանցը = (Մեմուա-շb): Գործողութեան առարկան՝ շիշտիլի = դարպասները յոգնակի ձեւով է, որ թելադրում է գործողութիւնն էլ տալ յոգնակի՝ շիդիշտուալի: Մի բան էլ աւել է այն, որ անպայման չէ առարկայի տիրոջ անունը լինի յոգնակի, բայց դա էլ տուած է՝ Նադիմի-լի: Այսքան նրբութիւն կայ այս չորս ուրարտերէն բառում:

Բայց ինչո՞ւ վերջին բառում երեք ձայնաւոր i-եր են չարուած = շիդիշտուալի: Միթէ՞ նրա համար, որ մասնագէտը կրճատի, թողնի մէկ i: Մեծ գիտելիքներ հարկաւոր չեն հասկանալու համար, որ այստեղ, երեք



ի-երի արանքում բառերը բաժանուում են շիդֆի եւ տոււալի՝ հայերէն լեզուով սեպագրւած է՝
 իՄե-նու-աս ժխալ-դի-նի լի-սե(լ), էս-տի-դի շի-դ(ֆ)-ի-յ
 էս տոււալի = ուրիշ կերպ՝ «Մենուան Բագ Նալդուն
 լսել է եւ այստեղ կառուցել այս տուել է», որի վրան այս
 վիմագիրն է ամրացրած:

Այսպիսով babu արտայայտող գիրը օգտագործուած է որպէս սել, սե վանկ, որը կարող է տալ՝ ա-սել, տե-սել, լը-սել, որպիսիք սեպագրերում հանդիպուում են, ինչպէս ՈւՍԱ-ի 18-րդ վիմագրի 39-րդ տողում հայերէն տառադարձով կա ժխալ-դի-նի լի-սել-ի (պատը) հաւ-տե քաղուցի(լ), շարունակութիւնը հաստատուած է՝ կա(յուն) ա-նի ուր Տու-ուշ-պա(ն)» (էջ 123):

Վերը յիշուած Լիպինի գրքի սեպագրերի աղիւսակում կան մի տեսակի ձայնաւոր a=ա, i=ի, u=ու զանազան գրերով եւ կայ աղիւսակի 229-րդ գիրը, որը նոյն ձայնաւորներով է տառադարձուում բայց ամէն մէկը ունի ապաթարց մակակէտ նախդիր՝ a, i, u եւ յետդիր՝ a', i', u'. Սրանք արտայայտում են այս ձայնաւորները կոկորդային շնչեղ հնչիւնով:

Այս գիրը վանեցի լեզուաբանները օգտագործել են հա=ha (ոչ խա-ժա) վանկը արտայայտելու: Սրանց ապացոյցը բերուում են սեպագիր մէջբերումներում, որոնց հայերէն տառադարձն է՝
 Լ Ա-դի հա-սե մա-նու ա-նու-վի(ն) խու-րա-դի-նա-ւու մէջ:

ՈւՍ-րի հա-սե սալ լու-թու (կնոջից մերկ ծնուած) ԼՍ A.SI մէջ-ու ե ա-նու-վի»:

Խուրադի նշանակում է զօրք, որի կրճատ ձեւն է A.SI գաղափարագրով: Մեր լեզուով ասուած է՝ «Նոսելու հասած ջահել տղաներ առնուեն զօրքի մէջ»: Նոյնը ասուած է Ուտողում՝ «Սիրելու, սիրուելու հասած ջահել տղերք զօրքի մէջ առնուեն»:

Մասնագէտներն են ասել, որ սեպագիր Տ=շ հարկաւոր է կարգալ S=ս: Հայերը ասուերէն i=ի ձայնաւորով բառի սկզբին արտայայտել են է՝ ինչպէս՝ i-ni=է-նի, is-ti-ni=էս-տի-նի, ir-e-bu-ni=էր-ե-ւու-նի եւայլն: Այս i=ի ձայնաւորը ձայնաւորների մօտ տալիս է հայերէն յ, ինչպէս՝ Gi-ar-ni=Գյառնի, Bi-a-i-ni=Վյայնի եւայլն: Հայերէն վ=W բաղաձայնը ասուերէն b բաղաձայնով են տուել:

Լիպինի աղիւսակի 325-րդ գիրը, արտայայտում է za, sa=qա, ծա, հայերէնում կարող է նաեւ օգտագործուած լինել սա, ցա վանկերը արտայայտելու համար: Սեպագիր մէջբերումը Արգիշտի տարեգրից, հայատառ կր ինի՝
 իԱր-գիշ-տի-սե ա-դի (յուվ ուրու Արգիշտեիսիմիլի շի-դ(ֆ)-ի-վի (յուվ)
 Լd (գետ) Մու-նանի(ց?) PA5 (ջրանց) Հա-ծա-յ-նի (Հացայնի) կուռնի ե ա-գու վի (ակնվի):

Սա իմ ընթերցումն է՝ «Արգիշտին ասել է՝ եւ Արգիշտիսիմիլի բերդը կառուցուի, եւ Մունա գետից (Արաքսից) ջրանցք տարուի Հացայնի երկրամասի համար»: ՈւՍԱ-ն տառադարձել է՝ (2-3) Ar-gis-te-hi-ni-Li ši-du-bi (iDM)u-na-ni PA5.i'A-za-i-ni-e KUR-ni-e a-gu-ni թարգմանուած է՝ «Արգիշտիսիմիլի եւ խոյացրի,

գետից ջրանցք Ազա երկրին տարայ» (էջ 239):

Կարելի է ենթադրել թէ այս Ազան խեթական կայսրութեան Խոյեան իսլամական Ազգի կոչուող երկրներն են: Անշուշտ, իսլամական Հայաստանն է եւ կարծում եմ Ազգի ասելով, նոյն երկիրն են նկատի ունեցել: Վ.Ն. ինչպիսիք վերը յիշուած գրքում լատիներէն տառադարձում պաշտպանել է ընդունուած AZZi ձեւը, իսկ ռուսերէն տառերով տալիս է Ազի, այսինքն առաւելութիւն տալով այս վանկերի AS-si = Asi անուանը: Ճիշտը ասած, եթէ սեպագրողները Asi կամ Azi նկատի ունենային, կարող էին արտայայտել A-si, A-zi, կամ Az-i, As-i գոնէ մի անգամ չկայ թեքում: Երեւի, ճիշտ կը լինի կարգաւ ԱՅՄԻ (Հացցի?):

Վանի թագաւորութեան ժամանակի համար ժամանակաւոր ընդունենք Հացայմի ձեւը, յետոյ կամ կը ճշտուի կամ կ'ապացուցուի:

Մնում է մէկ ուրիշ սեպագիր մէջբերում մը: Սրա հայերէն տառադարձն է՝ Բագ Խալ-դի-եմ սուլմի (S(ՈՒՆ) սու-սի i(Ռու-սա-ս-ս) Ար-գիշ-տե-խի-մի-ս-ս շիդ(ֆ)ի էս սու-մի, Ե-հա քագ Խալ-դի-մի (լի-ս-ս-լի հա-ս-տե) քա-դու ցի Ե, իշա-ծա-յ-մի կու-մի քագ IM-մի (Տեր Սեւայմի) ուրու դուր-սու-մի:

Մեր լեզուով կը լինի՝ «Բագ Խալդուց սոյն տուն սուսի տաճարը Ռուսաս Արգիշտի հետեւորդս կառուցել տուեց կամ (թէ) Բագ Խալդուն լսեցի հաստ) պատեցի Հացայնի կողմի Բագ IM-նի (Տեր Սեւայնի) բերդը դրսին...»:

Այսպէս կարդացի, ինչպէս չի ընդունուած: Ընդունուած ձեւով կարդացել է մասնագէտ Ն.Վ. Յարութիւնեանը «Կարմիր բլուրի ուրարտական նոր արձանագրութիւնները» գրքում: Այս գրքի առաջաբանը գրել է Լ.Լ. Պիտրովսկին:

301 թուին, այն ժամանակ, երբ Քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակուեց, ինչպէս պատմում է Ագաթանգեղոսը, Գրիգոր Լուսաւորիչը զբաղուած էր կրօնի քարոզչութեամբ, եկեղեցիների վանքերի հաստատմամբ, իսկ Տրդատ թագաւորը, զօրքի գլուխն անցած, վերացնում էր հեթանոսական կրօնի մեհեանները, կուռքերը*: Եւ եղաւ այնպէս, որ Տրդատ թագաւորը Վաղարշապատից Արտաշատ տանող ճանապարհին գտնուող Տիր աստծոյ մեհեանը առաջինը եղաւ ենթակայ վերացման: Տիրիդատ, պարսկերէն նշանակում է «Տիր աստծոյ տուածը»: Եւ Տիր աստծոյ տուածը առաջին հերթին Տիր աստծոյ մեհեանն էր աւերում: Տիր աստուածը օժտուած էր կարողութեամբ բոլորին շնորհել դպրութիւն եւ ցանկացած մասնագիտութիւն: Կարո՞ղ էր արդեօք լինել այնպէս, որ հայերը չունենային դպրութիւն, իսկ դպրութեան աստուած ունենային: Պրոֆ. Ա.Գ. Աբրահամեանը «Հայ գիր ու գրականութիւն» գրքում ասում է, որ Աղեքսանդր Մակեդոնացու ժամանակուայ մի յոյն պատմիչ թուարկում է գրագէտ 8 ժողովրդների շարքում հայերին, որպէս գիր ու գրագիտութիւն ունեցող ժողովուրդ: Քրիստոնէութիւնից հետապնդող մեհեանների բուրմերը սեպագրերը տարած կը լինէին Միջագետք, որտեղից 100 տարի յետոյ Դանիէլից վերադարձել էին տուն ու ընդմիշտ մերժուել Մաշտոցի կողմից:

Իսկ ո՞վ կարող է ասել թէ կայ Հայաստանում Տրդատ թագաւորի աւերած մեհեան: Երեւի Ագաթանգեղոսը ճիշտ չի՞ ասում, որ մեհեանները աւերում էին: Ո՛չ: Ագաթանգեղոսը ճիշտ է ասել: Վաղարշապատից Ար-

տաշատ տանող ճանապարհը միակն էր, որ Հրազդանն անցնում էր «Հացայմի կու-մի Բագ Տեր Սեւայմի դուրսումիս» բերդի մօտ եւ Արին բերդի էրեւմունի բերդի մօտով, դէպի այժմեան Նուբարաշէն:

Մեծ պատմաբան ու հնագէտ Բ.Բ. Պիտրովսկին տեսել է այն մեհեանը, որը Արտաշատի ճամբին աւերել էր Տրդատը: Ինքս տեսել եմ այդ մեհեանի պատերի սեպագիր քարերը, որոնք Տրդատի զինուորները ջարդել, փշրել, ցած են գցել: Պիտրովսկին ապացուցում է, որ մեհեանի սեպագիր քարերը հնադարեան ժամանակից սեպագրուած, շարուած են եղել տաճարի ներքեւի (ցոկոլի) երկու շարքում, իսկ քարերը ջարդուած վիճակում թափուած են եղել միջնադարեան ժամանակի փոսում: Նշուած գրքի առաջաբանում պեղումների ղեկավարը գրում է, որ «... 1961 թուին պեղումները մօտեցան այն տեղին, որտեղ 25 տարի առաջ գտնուել էր սեպագրի բեկորը եւ որտեղ (վաղ) միջնադարեան շերտի փոսում գտնուեց սեպագիր բազալտի քարը (73,5x43,5 սմ) տասնմէկ տողով... 1962 թուին վերին (միջնադարեան) շերտերում... գտնուեց բազալտի սրբատաշ խոշոր քարերի փլուզում, որոնց մէջ կային տասնմէկ տողանոց սեպագրերով քարեր: Պարզ էր, որ գործ ունենք չէնքի երկշարք բազալտէ խոշոր քարերի ցոկոլային մասի փլուածքի հետ» (էջ 5 եւ 6):

Երեւի թէ սա առաջին դէպքն է, երբ սեպագրական ու գրաբարեանը, միեւնոյն հայ ժողովրդի հեթանոսական ու քրիստոնէական գործունէութիւնը միախառնուում, ի մի են գալիս Տէր-Սեւայնի բերդի փլուածքներում:

Հին էրեւունի բերդից նոր Երեւանի բերդն ու Ղանթարի տակն էր գնում ճանապարհը Թոխմախան լճակի մօտով, նախկին Մարքսի փողոցով: Իսկ դէպի Վաղարշապատ, երեւի թէ Ջրվէժ գետակի ձախ ափով, այժմեան երկաթ գծի կայարանի տեղով, դէպի Շէնգաւիթ գնացող ճանապարհով, սրանից բաժանուում էր, գնում դէպի Կարմիր բլուր: Տէր Սեւայնի բերդի տեղը ամայի է: Մինչդեռ նա ոչ միայն հնադարեան, Ն.Բ. է. դարուայ, այլեւ միջնադարեան, քրիստոնէութեան մուտքը Հայաստան, 301 թուի պատմական յուշարձան է, նա պէտք է պահպանուի բոլոր սերունդների համար:

* Շատ վաղուանից հայոց պատմութիւնից յիշում եմ Նոր Վիրապը, Ս. Հռիփսիմէի պատմութիւնը, արքայի խոզ դառնալը, Ս. Գրիգորի սրբազորութիւնները, քրիստոնէութեան ընդունումը, որ զուգակցուում էր մեհեանների աւերմամբ, մատենագրերի արեամբ: Իսկ 1981 թուին Երպետ համալսարանի խմբագրական յանձնաժողովի հրատարակած «Հայոց պատմութիւնը» գրքում ոչինչ չկայ: Կան Տրդատի քաղաքործութիւնները նախքան հաւատալը, կին առնելը, երանելի Նունէի մասին: Միթէ սա գիտական հրատարակութիւն է:

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

— Յակոբ Կարապետցի

«Երկու աշխարհ»

— Յարութիւն Պէրպէրեանի

«Անցման եղանակ» գործերը: